Հնագոյն երևոյթը օրհնող աջի պատկերագրութեան ունինք Վիեննայի Ծննդոց գրքի Աբրահամի զոհաբերութեան մանրանկարի մէջ և Բավեննայի Ս. Վիտալիոսի մոզայիկներից Արելի և Մելքիսեդեկի նոյն տեսարանի մէջ, առաջինը Ե. և երկրորդը Զ. դարի գործ (1)։ Երկուսը միասին՝ այսինքն աղաւնին և աջը երևան են գալիս հնագոյն պատկերագրութեան մէջ միայն մկրտութեան տեսարանում, ինչպէս մեր Էջմիածնի փղոսկրի կազմով աւետարանին կցուած մի մանրանկարի մէջ, որ Զ. դարի գործ է համարւում, և Օձունի գերեզմանական կոթողի վերայ, իսկ միջին դարերում օտար և հայ մանրանկարչութեան մէջ շատ յաճախ, նաև որպէս Աստուծոյ ներկայութեան նշան (2)։



Պատկեր 27

Գերեզմանական խաչքար Մանկուսում.

Հազուագիւտ է երկուսի միատեղ երևոյթը խաչելութեան պատկերագրութեան մէջ. անշուշտ խաչի վերայ իջնող աղաւնու պատկեր ունինք շատ վաղ, Բավեննայի սարկոֆագների պատկերագրութեան մէջ (1), բայց այստեղ աղաւնին մարդկային հոգու պարզ նշանակ է և ոչ Ս. Հոգու։ Թ. դարի Տանժերի եկեղեցու փղոսկրի տախտակի խաչելութեան գլխին Տիրոջ օրհնող աջն է երևում, բայց պակասում է աղաւնին. նոյնը Լոթարի (* 855) խաչի գլխին, որ պսակ է բռնած (2)։ ԺԱ. դարի առաջին քառորդում Հենրիկոս Բ.ի աւետարանի տախտակի խաչի գլխին նոյնպէս Տիրոջ աջն է, իսկ Էսենի մի աւետարանի փղոսկրի տախտակի վերայ աջը՝ յաղթութեան պսակ բռնած (3)։

Եթէ մինչև Է. դար հազուագիւտ էր խաչելութեան պատկերը արուեստի նիւթ դարձնել, հաւանական չէ ամենևին, որ խաչելութեան հետ գործադրուէին երրորդութեան միւս անձինք։ Մկրտութեան համար աւետարանական պատմութիւնը պարզ ցուցումներ էր տալիս գեղարուեստական այդպիսի շարադրութեան, բայց ոչ երբեք խաչելութեան կամ խաչից իջեցնելու համար. միայն դաւանաբանական–մեկնաբանական որոշ հայեցքներ կարող էին արուեստագէտին միտք տալ այդ իրողութիւններու հետ կապելու և միւս անձանց ներկայութիւնը. յիրաւի, այս նիւթի յետագայ զարգացումն ու փոփոխակները այլ ևս ոչ մի կասկածի տեղիք չեն թողնում, թէ նա ծագումով և զարգացմամբ կապուած էր իրենց սրբասացութեան դաւանաբանական–ժամապաշտական բացատրութիւնների հետ։

Երից սրբասացութեան վէճը ծագեց Զ. դարի առաջին կիսում և որոշ կերպարանք ստացաւ Յուստինիանոսի 551 թուի հրովարտակով և 553 թուին դատարան Ե. տիեզերական կոչուած ժողովի մէջ. բայց հակառակ նորա փորձերի, որի համար հիմք էր ընդունել Լեւոն Բիւզանդացու ձևակերպութիւնը. — ἕνατῆς ἁγίας τριάδος πεπονθέναι ἐν σαρκὶ —, միութիւնը արևելքի մէջ գլուխ

(1) Kaufman. 392. 472|3։ Pokrowski Otscherki Parmiat. Xrist. Iskusstwa. SP. 1910. 102։

(2) Beissel. 131. 221. 202։ Հայոց մէջ ԺԱ. դարում Խանզալի (տե՛ս հետեւեալ գլխի մէջ) եւ Էջմիածնի N 362|3784 աւետարանների մանրանկարներում։

(1) Kraus. I. 253։

(2) Beissel. 309։ Kraus. II. 383։

(3) Beissel. 312-313։